ՅՈԲԵԼԵԱՆԱԿԱՆ

ՎԱԼԵՐԻ ԹՈՒՆՅԱՆ
Պատմական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ՄՇԱԿԸ
(ՀՀ եւ ՌԴ պատմական գիտությունների դոկտոր Ստեփան Ստեփանյանց (Ստեփան Կերտող) 60-ամյակի առթիվ)

Վելի քան 35 տարի է, ինչ Ստեփան Ստեփանյանցն զբաղվում է Հայ Առաքելական Եկեղեցու պատմության ուսումնասիրության հիմնահարցերով։ Բեղուն է պրոֆեսորի գրիչը, եւ բազմաշերտ են նրա հետազոտությունները։

1994 թվականին լույս է տեսնում հեղինակի արժեքավոր եւ երկար սպասված «Հայ Առաքելական Եկեղեցին ստալինյան բռնապետության օրոք» վերտառությամբ մենագրությունը, որի ռուսերեն տարբերակը տասը տարի անց հրատարակում է գերմանական «Սանկտում» հրատարակչությունը։ Այս աշխատությամբ փաստորեն վերականգնվեց 1920 թվականին՝ Հայաստանի խորհրդայնացումից հետո, ընդհատված Հայ Եկեղեցու պատմության ուսումնասիրության եւ հետազոտության գործընթացը։ ՀՀ ԳԱԱ հրատարակչության խմբագիր Ս. Ստեփանյանցը, տարիների ընթացքում ուսումնասիրելով Հայաստանի ազգային արխիվի, Երեւանի Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի եւ Ե. Չարենցի անվան գրականության եւ արվեստի թանգարանի նյութերը եւ վավերագրերը, իր արժեքավոր ուսումնասիրության էջերում լուսաբանեց Հայ Եկեղեցու համար ծանրագույն՝ ստալինյան դաժան բռնապետության ժամանակաշրջանը՝ բռնություններ հայ հոգեւորականության նկատմամբ, եկեղեցիների եւ վանքերի ավերումներ, հակակրոնական քաղաքականություն եւ այլն։ Այդ տարիներին բռնությունների զոհ դարձավ Ամենայն Հայոց Խորեն Ա. Մուրադբեկյան կաթողիկոսը, որի խորհրդավոր մահվան հանգամանքների քննությանն առաջինը մեր եկեղեցական պատմագրության մեջ անդրադարձել է Ս. Ստեփանյանցը։

Ս. Ստեփանյանցը ծնվել է 1963 թ. օգոստոսի 27-ին Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիում։ Տոհմը սերում է պատմական Տարոն գավառից։

Նրա ազգականներից է նշանավոր հոգեւորական, Տարոնի վերջին հոգեւոր առաջնորդ Ներսես եպս. Խարախանյանը։

Ս. Ստեփանյանցի հայրը՝ Միհր Ստեփանյանցը, անվանի լրագրող էր, ՀՀ սպորտի եւ ֆիզկուլտուրայի վաստակավոր աշխատող եւ «Երեկոյան Երեւան» թերթի հիմնադիրներից մեկը։

Ս. Ստեփանյանցը 1988 թ. ավարտում է ԵՊՀ ռուսաց լեզվի եւ գրականության ֆակուլտետը։ Այդ նույն թվականին նա գործուն մասնակցություն է ունենում արցախյան շարժմանը՝ դառնալով ԵՊՀ «Ղարաբաղ» կոմիտեի անդամ եւ շարժման երիտասարդական թեւի ղեկավարներից մեկը։

Այնուհետեւ մինչեւ 1991 թ. որպես սրբագրիչ աշխատում է Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի հրատարակչությունում, եւ հենց այդ ժամանակվանից էլ սկսվում է նրա բուռն հետաքրքրությունը դեպի հայ եկեղեցական պատմագրությունը, որն ահա շարունակվում է մինչեւ այսօր։ 1988-ից սկսած՝ Ս. Ստեփանյանցը, հետազոտելով հայաստանյան տարբեր արխիվներում Հայ Եկեղեցու պատմությանն առնչվող արխիվային փաստաթղթերը, իր կարեւոր աշխատություններով լրացնում է Հայ Եկեղեցու պատմության նորագույն շրջանի սպիտակ էջերը։

1996 թ. ավարտելով ԳԱԱ ասպիրանտուրան՝ Ս. Ստեփանյանցը ԳԱԱ պատմության ինստիտուտում պաշտպանում է «Հայ Եկեղեցին 1920–50-ական թթ.» թեկնածուական ատենախոսությունը։

Ս. Ստեփանյանցը հետագայում եւս շարունակում է Հայոց Եկեղեցու պատմության ասպարեզում իր ուսումնասիրությունները։ 1999 թ. հրատարակում է «Հայ հոգեւորականության մասնակցությունը XX դարի պատերազմներին եւ հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումներին» մենագրությունը։ Հաղթահարելով բազում դժվարություններ եւ խոչընդոտներ՝ 1999–2001 թթ. Ս. Ստեփանյանցին հաջողվում է ուսումնասիրել ՀՀ ազգային անվտանգության նախարարության արխիվի կարճված գործերի ֆոնդերի նյութերը, որի արդյունքում եւ 2002 թ. «Մուղնի» հրատարակչությունը լույս է ընծայում «1920–1950-ական թվականների բռնությունների զոհ հայ հոգեւորականներ» վերնագրով փաստաթղթերի ժողովածուն, որի էջերում տեղ են գտել 244 բռնադատված հայ հոգեւորականների անձնական գործերը։

2003 թվականին հրատարակվում է հեղինակի «Հայ Եկեղեցին Առաջին աշխարհամարտի տարիներին» ծավալուն մենագրությունը, որտեղ հեղինակը ներկայացնում է Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի եւ հատկապես

հայ հոգեւորականության անգնահատելի դերն արեւմտահայ գաղթականությանը փրկելու գործում, մասնակցությունը Առաջին աշխարհամարտին եւ 1918 թ. մայիսյան հերոսամարտերին։

2018 թ. Վեհափառ Հայրապետի բարձր հրամանով Ս. Ստեփանյանցը գրում է «Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու գործունեությունը Հայաստանի Առաջին Հանրապետության տարիներին» մենագրությունը։ Այս աշխատությունը լույս սփռեց Հայ Եկեղեցու 1918–1920 թթ. պատմության վրա։

2001 թ. Ս. Ստեփանյանցը «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարանի հիմնական հեղինակներից մեկն է։ Բացի այդ՝ Ս. Ստեփանյանցն ավարտին է հասցրել «Հայ Եկեղեցու պատմությունը XII դարից մինչեւ մեր օրերը» դասագիրքը՝ ճեմարանի եւ բուհերի աստվածաբանական բաժինների համար, ինչպես նաեւ «Հայերի ցեղասպանությունը եւ «Հայ Առաքելական Եկեղեցին» արխիվային փաստաթղթերի ժողովածուն, որոնք սպասում են իրենց հրատարակչին։

2023 թ. Ռուս Ուղղափառ Եկեղեցու պատրիարքի՝ Կիրիլի կողմից խմբագրվող «Ուղղափառ հանրագիտարանի» 47-րդ հատորում հրատարակվում է Ս. Ստեփանյանցի գիտական հոդվածը՝ «Մոսկվա։ Հայ Առաքելական Եկեղեցի»։

1997–2017 թթ. Ս. Ստեփանյացն ապրում էր ՌԴ Բելգորոդի մարզի Ստարի Օսկոլ քաղաքում եւ պրոֆեսորի կարգավիճակով դասավանդում Բելգորոդի պետական համալսարանում, Վորոնեժի իրավատնտեսական ինստիտուտում։ Եղել է բուհի գիտական խորհրդի անդամ, Պետության եւ իրավունքի պատմության եւ տեսության ամբիոնի վարիչ, մասնագիտական ատեստավորման հանձնաժողովի անդամ, գիտական մի քանի ամսագրերի խմբագրական խորհրդի անդամ։

Ռուսաստանի Դաշնությունում ապրած տարիներին Ս. Ստեփանյանցը հիմնադրում է Բելգորոդի մարզի հայկական համայնքը, նախաձեռնում է Երկրորդ աշխարհամարտի տարիներին Բելգորոդ եւ Ստարի Օսկոլ քաղաքների ազատագրման համար մարտնչած՝ Խորհրդային Միության հերոս, գեներալ-լեյտենանտ Սարգիս Մարտիրոսյանի անունով այս քաղաքների փողոցներից մեկն անվանակոչելու գործը։

2013 թ. ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում պաշտպանում է դոկտորական ատենախոսություն՝ «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի գործունեությունը Առաջին աշխարհամարտի տարիներին (1914–1918 թթ.)» թեմայով։ Նույն թվականին ստացած պատմական գիտություններ-

րի դոկտորի գիտական աստիճանը ճանաչում է ՌԴ կրթության եւ գիտության նախարարությունը։

ՌԴ-ում ապրած տարիներին Ս. Ստեփանյանցը շարունակում է զբաղվել Հայոց Եկեղեցու պատմության ուսումնասիրության հարցերով։ 2016 թ. հրատարակվում է «1930 թ. հակակոլտնտեսային ապստամբական ելույթները Դարալագյազի (Վայոց ձոր) գավառում եւ Հայաստանի մյուս շրջաններում» մենագրությունը, որի էջերում մեծ տեղ է հատկացված Հայ Եկեղեցու քահանայից դասի մասնակցությանը։

Կրոնագիտական ուղղվածություն ունեն «Ռուս Ուղղափառ Եկեղեցու հայաստանյան պատմությունը» (Երեւան, 2018 թ.), մինչեւ օրս անտիպ «Մկրտություն Հայ Եկեղեցու ծեսով» արխիվային փաստաթղթերի ժողովածուները, ինչպես նաեւ «Հայ Կաթոլիկ Եկեղեցու պատմությունը» անտիպ փաստաթղթերի ժողովածուն։

2017 թ. վերադառնալով Հայաստան՝ Ս. Ստեփանյանցը՝ որպես դասախոս, աշխատանքի է ընդունվում Սեւանի Վազգենյան դպրանոցում, իսկ պրոֆեսորի կարգավիճակով դասավանդում է Մոսկվայի Մ. Լոմոնոսովի անվան պետական եւ Գ. Պլեխանովի անվան ռուսական տնտեսագիտական համալսարանների երեւանյան մասնաճյուղերում։ 2019 թ. ավարտելով Մոսկվայի Ա. Գրիբոյեդովի անվան միջազգային իրավունքի եւ տնտեսագիտության ինստիտուտի իրավաբանական բաժինը՝ նա գիտական եւ մասնագիտական հենքի վրա շարունակում է ուսումնասիրել նաեւ հայ եկեղեցական իրավունքը՝ «Էջմիածին» ամսագրում հրատարակելով «Հայաստանյայց Եկեղեցու բարեկարգության խնդիրների շուրջ» գիտական հոդվածների շարքը եւ ավարտին հասցնելով «Հայաստանյայց Եկեղեցու Սահմանադրության խնդիրը» աշխատությունը։

Պրոֆեսոր Ս. Ստեփանյանցը պարգեւատրվել է «Բաշկորտոստանի կազմավորման 100-ամյակի» պատվավոր մեդալով (2018 թ.), ինչպես նաեւ արժանացել է Սփյուռքի նախարարության շնորհակալական նամակի եւ մի շարք բուհերի պատվոգրերի։

Հարգելի՛ Ս. Ստեփանյանց, մաղթում ենք Ձեզ ամենակարեւորը՝ առողջություն եւ արեւշատություն։ Եւ թող Աստված Ձեզ զորավիգ լինի Ձեր բոլոր ձեռնարկումներում՝ իրականացնելու այն ամենը, ինչ ծրագրել եք առաջիկա տարիներին Հայ Եկեղեցու պատմության ուսումնասիրության գնահատելի ասպարեզում։